# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար հանդերձանքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/27» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«20» հուլիսի, 2018թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Ավետիք Ավագյան՝** (Գնման Պատասխանատու /Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար

*հանձնաժողովի անդամներ՝*

**Հարություն Դավթյան՝** (Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ դատական կարգադրիչների ծառայության պետի առաջին տեղակալ

**Ալինա Պոչիկյան՝** (Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ դատական կարգադրիչների ծառայության ֆինանսաբյուջետային բաժնի պետ

**Անուշ Բոջուկյան՝** (Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ դատական կարգադրիչների ծառայության ֆինանսաբյուջետային բաժնի ավագ մասնագետ

**Ռոզա Եղիազարյան՝** (Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ դատական կարգադրիչների ծառայության անձնակազմի կառավարման բաժնի մասնագետ

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Օֆելյա Ասատրյան՝** (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/Միմ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

**1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/27» ծածկագրով ընթացակարգի ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակիցների հետ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն գնի նվազեցման շուրջ բանակցություններ վարելու մասին.**

Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված, մասնակիցների առաջարկած գներն են.

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Գնային առաջարկները (ՀՀ դրամ) | | |
|---|---|---|---|---|
| | | «ԴԵՐՁԱԿ» ՍՊԸ | | |
| | | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/ | ԱԱՀ /տառերով և թվերով/ | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 3 | *Արտադրական հագուստ* | 1 075 000 | 215 000 | 1 290 000 |

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Գնային առաջարկները (ՀՀ դրամ) | | |
|---|---|---|---|---|
| | | «Ֆիրմա Լիդա» ՍՊԸ | | |
| | | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/ | ԱԱՀ /տառերով և թվերով/ | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 3 | *Արտադրական հագուստ* | 1 083 333.33 | 216 666.67 | 1 300 000 |

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Գնային առաջարկները (ՀՀ դրամ) | | |
|---|---|---|---|---|
| | | «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ | | |
| | | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/ | ԱԱՀ /տառերով և թվերով/ | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 3 | *Արտադրական հագուստ* | 1 120 000 | 224 000 | 1 344 000* |

****«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ն իր կողմից ներկայացված հայտով առաջարկած գինը թողել է անփոփոխ:***

**2. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ.**

Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

-Ընթացակարգի 1, 2, 3-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել **«ԴԵՐՁԱԿ» ՍՊԸ-ին,**

-Ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել **«Ֆիրմա Լիդա» ՍՊԸ-ին,**

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**Հանձնաժողովի քարտուղարին.**

Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետով՝ նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը

1) հայտերի բացման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակել տեղեկագրում,

2) հայտերի բացման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակել տեղեկագրում,

3) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել համապատասխան հարցումը,

4) ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև ***2018թ. հուլիսի 26-ը*** ներառյալ, ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի <<գ>> պարբերությամբ նախատեսված փաստաթղթը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, (հրավերի II մասի 3-րդ կետով սահմանված փաստաթղթերը):

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

Հանձնաժողովը որոշեց.

-Ղեկավարվելով Կարգի 46-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2018թ. հուլիսի 30-ին, ժամը 11:00-ին:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

***Գնահատող հանձնաժողովի նախագահ՝***

Ա. Ավագյան

(ստորագրություն)

***Հանձնաժողովի անդամներ՝***

Հ. Դավթյան

(ստորագրություն)

Ա. Բոջուկյան

(ստորագրություն)

Ռ. Եղիազարյան

(ստորագրություն)

Ալինա Պոչիկյան

(ստորագրություն

***Գնումները համակարգող՝***

Օ. Ասատրյան

(ստորագրություն)